

## Բ. ԵՐԳԵՐ

### ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵՐԳԵՐ

#### 1(344). ՀՈՐՈՎԵԼ

Արևիդ մատաղ, ա՛ր թառլան կյոմեշ,  
Հո ռավե՛լ, հո ռավե՛լ,  
Թափ տու՛ թև արա,  
Շուռ տու՛ սև արա:  
Հո ռավե՛լ, հո ռավե՛լ հո՛:  
Դուշմանի սիրտը սև արա,  
Հո ռավե՛լ, հո ռավե՛լ հո՛:  
Մաճկալը՝ մաճին, ծեռն՝ ականջին,  
Հո ռավե՛լ հո՛:  
Արևիդ մեռնեմ, ա՛ր թառլան կյոմեշ:

#### 2(345). ՀՈՐՈՎԵԼ

Մաճկալը մաճին ա,  
Ծեռն ընգաճին ա,  
Հոռավել ա՛, հոռավել ա՛  
Հոռավել ա՛, հա՛ հոռավել ա՛:  
Ք...եմ օսալ մաճկալի խանքաջին,  
Հոռավել ա՛, հոռավել ա՛  
Հոռավել ա՛, հոռավել ա՛:  
Հոլե՛, հոլե՛, հոլե՛ ջան, հոլե՛ ջան:  
Դե արի քաշի եզը ջան,  
Ակոսիդ մատաղ:  
Հոլե՛, հոլե՛, հոլե՛,  
Հոռավել ա՛, հո՛:

#### 3(346)

Քաշի, Աբռաշ ջան, քաշի՛, քաշի՛,  
Եզըտ մաշի,  
Քաշի, Աբռաշ ջան, քաշի՛,

Լուծըտ մաշի:  
Քու տերը սաղ ըլի, մինն էլ կտաշի:

Քաշի, քաշի, Աբռաշ ջան,  
Վարածըտ կըմանջի,  
Սոգին կյոմ միջին պըռննջի,  
Տերը կկյոմ միջին կըճըմանջի:

#### 4(347). ՉՈՔԱՆԻ ԵՐԳԸ

Չոբան ջան, չոբան, հե՛, հե՛, հե՛յ,  
Չոբան ջան, չոբան, հո՛, հո՛, հո՛յ,  
Չոբան ջան, չոբան, հե՛, հե՛, հե՛յ,  
Սարի դոշըմը պառկել ե՛ս,  
Շվին ծեռքըմդ քնել ե՛ս,  
Չոբան ջան, չոբան, հո՛, հո՛, հո՛յ:

Կարմիր իլխատեր չոբան ջան,  
Կապիտ մախրատեր հո՛, հո՛, հո՛յ,  
Չոբան ջան, չոբան, հե՛, հե՛, հե՛յ:

Ամբը վերևից գողում ա,  
Գայլը մերքևից մայրում ա,  
Չոբան ջան, չոբան, հե՛, հե՛, հե՛յ,  
Չոբան ջան, չոբան, հո՛, հո՛, հո՛յ:

Շներիդ քիս տուր, չոբան ջան,  
Գառներիդ մեր տուր, հո՛, հո՛, հո՛յ,  
Քույրիկիդ ինձ տուր, հե՛, հե՛ հե՛յ:

## ՀԱՅԴՈՒԿԱՅԻՆ ԵՐԳԵՐ

### 5(348). ՍԱՔՈՅԻ ԵՐԳԸ

Սաքոն մահուզերն ու մոսիմը,  
Բռնել ա Գվարգնի քարին,  
Շուն թուրքերի աչքիցն էր  
Կաթում կարմիր արին:  
Կեցցե, Սաք Շովյանով:

### 6(349). ՍԵՎԱՐԵՑԻ ՍԱՔՈՅԻ ԵՐԳԸ

Սևքարիդ մեռնեմ, Սաքո ջան,  
Սև սարիտ մեռնեմ, Սաքո ջան,  
Շովյանանց ցեղիտ մեռնեմ, Սաքո ջան:

Որտեղ տեսա սևքարեցի,  
Սրտիս մեջը սեր գցեցի,  
Սևքարիտ մեռնեմ, Սաքո ջան,  
Սև սարիտ մեռնեմ, Սաքո ջան:

### 7(350)

Գերեզմանիս մոտ՝ հարձանիս վրա  
Գրի հաղթություն, դե կործանվեցան,  
Տալարեն ծաղիկներ, թափեն արտասուք-  
ներ  
Տեսեք իմ ընկերներ,  
Նահատակ որդիներ՝ ծով Հայաստանի  
Գրի հաղթություն, դե կործանվեցան:

Ասել էր արքան՝ Նազարյանի պես,  
Ցույց տանք քաջություն, քաջ արմյանի  
պես,

Դե կռվենք հայ քաջեր,  
Ընկերներ մեր թշնամուն  
Ցույց տանք մեր քաջություն  
Հայ հեղափոխության,  
Լակոտ օսմանցուն:

## ՍԻՐԱՅԻՆ ԵՐԳԵՐ

### 8(351). ՀՈՌՈՍ

ա) տարբերակ

Հոռոմ, Հոռոմ, հոռոմել է յարս,  
Վարթը՝ ձեռին թռռոմել է յարս,  
Բա չեք ասի Հոռոմին տարել են,  
Յոթն օրով անտառում պահել են:

Հոռոմ, Հոռոմ, հոռոմել է յարս,  
Վարթը՝ ձեռին թռռոմել է յարս:  
Միսչի Հոռոմ, բաղնիք ես գնացել,  
Սապուն չունես, կեխտոտ ես մնացել:

Հոռոմ, Հոռոմ, հոռոմել է յարս,  
Վարթը՝ ձեռին թռռոմել է յարս:  
Բա չեք ասի Հոռոմին տարել են,  
Չաղդի տակին պահել են, պահել են:

### 9(352). ԱՆՉԻ ՀՈՌՈՍ

բ) տարբերակ

Բա չեք ասի, Հոռոմին տարել են,  
Յոթն օրով անտառում պահել են,  
Միսչի Հոռոմ, հոռոմել է յարս,  
Վարդը՝ ձեռին թռռոմել է յարս: } 2

Միսչի Հոռոմ, կայնել ես կարմնջին,  
Փաթաթվել ես շեկ յարի յափնջին  
Հոռոմ, Հոռոմ, հոռոմել ա յարս,  
Վարդը՝ ձեռին թռռոմել ա յարս: } 2

Միսչի Հոռոմ, բաղնիք ես գնացել,  
Սապուն չունես, կեխտոտ ես մնացել,  
Հոռոմ, Հոռոմ, հոռոմել ա յարս,  
Վարդը՝ ձեռին թռռոմել ա յարս: } 2

Բա չեք ասի Հոռոմին տարել են,  
Չաղդի տակին պահել են, պահել են,  
Միսչի Հոռոմ, կաշածդ<sup>1</sup> հազել ես,

<sup>1</sup> Կաշած – հավանաբար պետք է լինի կորսած (իրանակալ) (ծանոթ. բանահավաքի):

Տուֆլի չունես, ունքերդ կախել ես,  
Հոռոժ, Հոռոժ, հոռոժնել ա յարս,  
Վարդը՝ ձեռնի թռռոնել ա յարս: } 2

### 10(353)

Այս տարվա արտերը լավն ա,  
Մեչը լիքը գառն ա,  
Էն տղեն կանգնած առնուն ա,  
Քավթառ մեչը խառնուն ա:

Բալկոն ունեմ՝ դամիչ ա,  
Բախճես լիքը եմիչ ա,  
Աճի նանի, քիչ խոսա,  
Սրտով սիրածը անուշ ա:

Գութան հոլա, հոլա,  
Գութանի տակը քու ա,  
Քանի գժութին անես,  
Ինձ առնողը ինձ տող ա:

### 11(354)

Սիրահար, դուռ հեռացար<sup>1</sup>,  
Դուռ ինձ մոռացար,  
Դուռ ինձանից ի՞նչ տեսար,  
Որ այդպես շուտ նեղացար:

Երազունս քեզ տեսա,  
Կլխիտ քիշմիչ չալ տեսա,  
Իմ քիրս քեզ տալ տեսա,  
Ծծիդ վրա խալ տեսա:

### 12(355)

Ծիրան, ծիրան է յարս  
Ոսկի ծիրան է յարս: } 2

Ղոշավանքա դշերը,  
Ծոցիտ քնեմ գըշերը,  
Պաչեմ խալտոթ քշերդտ:

Էս ֆայտոնը մերն ըլնի,  
Ակներն էլ կարմիր ըլնի,  
Նստեմ քյնձմ յարիս մոտ,  
Գըշերը երկար ըլի:

Խնըմքերը խոշ են կյալի,  
Տառտածը բոշ են կյալի,  
Գիդաք թե դոչ են պիրըմ,  
Տու մի ասի, թըսան բողոճ են պիրըմ:

### 13(356)

Հանդը լիքը մասուր ա, (2)  
Իմ մերը քե կիսուր ա, համոտ վար<sup>2</sup>  
Վայ, յարո ջան, համ ինձ չառար:

Սալյարկեն բակը լիքն ա, (2)  
Իմ կլենտը թռռնիկն ա, համոտ վար,  
Վայ, յարո ջան, համ ինձ չառար:

Նախագափի հրամանը կկատարեմ ամ-  
ռանը,  
Իսկ Վանիկի<sup>3</sup> հրամանը կկատարեմ ծմռա-  
նը, համոտ վար,  
Վայ, յարո ջան, համ ինձ չառար:

Փետից ա իմ քթալը. (2),  
Վազդուշնի ա սիգնալս, համոտ վար,  
Վայ, յարո ջան, համ ինձ չառար:

Քթալըս՝ եղի միչին, (2)  
Իմ յարը՝ կեղի միչին, համոտ վար,  
Վայ, յարո ջան, համ ինձ չառար:

Մատռոս լիքը յուր ա, (2)  
Սար քյնձլը երկյուղ ա, համոտ վար,  
Վայ, յարո ջան, համ ինձ չառար:

<sup>2</sup> Բանասացն օգտագործում է «համոտ վար» ձևը, որի փոխարեն հավանաբար պետք է լինի «համոտ յար» (ծանոթ. բանահավաքի):

<sup>3</sup> Թոռնիկը և Վանիկը Գետաշենի բնակիչներ են (ծանոթ. բանահավաքի):

<sup>1</sup> Այս երգը հորինել է բանասաց Թագուհի Համ-  
գյանի եղբայրը (ծանոթ. բանահավաքի):

**14(357). ԻՆՉ ԿԱՆԵԱ**

- Բա որ դառնամ մի չինարի,  
Բաղունդ բուսնեմ, ի՞նչ կանես,  
- Ես որ դառնամ մի սուր կացին,  
Գոքիցդ կաչեմ, ի՞նչ կանես:  
- Բա որ դառնամ մի չալ աղավնիկ,  
Ձեռքիցդ թռչեմ, ո՞նց կանես,  
- Բա որ դառնամ մի չար որսկան,  
Հետևիցդ ընգնեմ, ի՞նչ կանես:

- Բա որ դառնամ մի ոսկե ծուկը,  
Ծովըմը լեղ տամ, ի՞նչ կանես,  
- Ես կտռոնեմ մի հատ թռչի,  
Քեզ կբռնեմ, ո՞նց կանես:

- Բա որ աստվածանից գա հրաման,  
Հիվանդանամ, ի՞նչ կանես,  
- Ես որ դառնամ մի բժիշկը,  
Քեզ կբուժեմ, ո՞նց կանես:

- Բա որ աստվածանից գա հրաման,  
Որ մեռնեմ, ի՞նչ կանես,  
- Բա որ դառնամ յոթ կյազ պատան,  
Քեզ փաթաթվեմ, ի՞նչ կանես:

**15(358). ԱՆՉԻ ՇՈՒՇԱՆ**

Փունջինար<sup>1</sup> եղնիս,  
Որ ընծի չառնիս,  
Բեմուրազ մեռնիս:

Կնացինք կալեր,  
Կտրեցինք շալեր,  
Բաշ բոյիտ մեռնիմ,  
Նշանլու յարե:

Ախչի Շուշան,  
Արի երթանք Սուրբ Նիշան,  
Ոսկի մատնիք կանիմ քեզ նշան:

Փունջինար եղնիս,  
Որ ընծի չառնիս,

Բեմուրազ մեռնիս:

**16(359). ԱՄՊԵԼ Ա**

Ամպել է՝ անպի նման, } 2  
Վայ շաքար է՝ գնդի նման,  
Իմ մերն ինձ ո՞նց ա պահել, այ բալամ, } 2  
Օւլած գյուլբանդի նման:

Ամպել ա, ծյուն չի գալիս, } 2  
Վա՛յ, մթնել ա, տուն չի գալիս,  
Էս անտեր բարցի վրա, այ բալամ, } 2  
Առանց յար քուն չի գալիս:

Ապիտակ չիշ, կարմիր գինի, } 2  
Վայ մեր խումն անուշ լինի:  
Հագրված կյանքի տեր ես, ա՛յ բալամ, } 2  
Պարտական մերդ լինի:

**17(360). ԴՅՈՒՋՔԱՆԴԻ ԴՈՒՐԱՆՉ<sup>2</sup>**

Ելա սարը սար տեսա,  
Դյուզքանդի դուրան ա, դուրան ա:  
Սև կաստուռով յար տեսա,  
Ընծի վառեց էտ քո տված  
Նամակը, նկարը, նշանը, պայմանը:  
Տա՛րի նա՛մ, դա՛յ, նա՛մ, նա՛յ, նա՛յ,  
Դա՛յ նա՛յ, նա՛յ, նա՛յ,  
Նա՛րի նա՛մ, նա՛յ, նա՛յ, նա՛յ:

Ելա սարը՝ սար տեսա,  
Դյուզքանդի դուրան ա, դուրան ա,  
Երկար ծամով յար տեսա,  
Ընծի վառեց էտ քո տված  
Նամակը, նկարը, նշանը, պայմանը:

Ես դուշ եմ, թե՛ս՝ դեղին,

<sup>2</sup> Այս երգը բանասացի երկացանկի ամենասիրված երգն է: Նա այս երգին մոտեցել է ստեղծագործաբար և տեքստի մեջ հավելումներ է կատարել, որը գրավել է ունկնդիրներին: Սա գյուղական և բնտանական հավաքույթների ժամանակ կատարվող ամենահամընթախ երգն է եղել, որն ուղեկցվել է մեկնաբանություններով, ծափուծիծաղով (ծանոթ. բանահավաքի):

<sup>1</sup> Փունջինար - ըստ բանասացի՝ ծաղիկների փունջն է:

Դյուզքանդի դուրան ա, դուրան ա,  
Ման կուգամ յարիս գեղին,  
Ընծի վառեց էտ քու տված  
Նամակը, նկարը, նշանը, պայմանը:

Ես ծիտ եմ, թևս՝ դեղին,  
Ման կուգամ յարիս գեղին,  
Ընծի վառեց էտ քու տված  
Նամակը, նկարը, նշանը, պայմանը:  
Դա նիր նա՛մ, նա՛մ, նա՛յ, նա՛յ:

Գթալը եղից դուրս ա,  
Դյուզքանդի դուրան ա, դուրան ա,  
Իմ յարս գեղից դուրս ա,  
Ընծի վառեց էտ քու տված  
Նամակը, նկարը, նշանը, պայմանը:  
Դա նիր նա՛մ, նա՛մ, նա՛յ, նա՛յ:

Մատնիքտ մատովս ա,  
Դյուզքանդի դուրան ա, դուրան ա,  
Սիրածս սրտովս ա:  
Ընծի վառեց էտ քու տված  
Նամակը, նկարը, նշանը, պայմանը:

Խնձոր ունեմ՝ կծած ա,  
Դյուզքանդի դուրան ա, դուրան ա,  
Կծած չի, արծաթած ա:  
Ինձ վառեց էտ քու տված  
Նամակը, նկարը, նշանը, պայմանը:

Թխտի միչի թուրն եմ<sup>1</sup>,  
Դյուզքանդի դուրան ա, դուրան ա,  
Ես Գրիշիկի քույրն եմ<sup>2</sup>,  
Ընծի վառեց էտ քու տված  
Նամակը, նկարը, նշանը, պայմանը:  
Տա նի նամ, դայ նա նի նամ...

Այ հենինեմ, հենինեմ,  
Դյուզքանդի դուրան ա, դուրան ա,

Ես Ռազմիկի<sup>3</sup> քենին եմ:  
Ընծի վառեց էտ քու տված  
Նամակը, նկարը, նշանը, պայմանը:  
Տարի նա՛մ, նա՛յ, նա՛յ, նի նա՛մ:

Էստեղ լավաշ, էնտեղ լավաշ, յարո ջան,  
Ես պար կուգամ, շաբաշ չես տալ, յարո  
ջան,  
Էստեղ լավաշ, էնտեղ լավաշ, քավոր ջան,  
Ես պար կուգամ շաբաշ չես տալ, քավոր  
ջան<sup>4</sup>:

## ԶԱՆԱԶԱՆ ԵՐԳԵՐ

### 18(361). ԱԼԵԼՈՒՅԱ

Ալելույա՛, ալելույա՛,  
Ջրօխնեքը ճրագլխով,  
Ջատիկն եկավ արկլխով,  
Թե քնած եք, վեր զարթնեցեք,  
Թե զարթուն եք, լավ լսեցեք:  
- Տընշեն, տընշեն ծեր պստիկի անունն  
ի՞նչ ա:  
- Չայգրամ ա:  
- Չայգրամը հորով-մորով մեծանա,  
Գինի խմի Նախճևանի,  
Չալ աբասին չարո տանի:  
Ալելվին մի քթալ եղ,  
Մի պոչատ հավ տվեք, թող տանի:

### 19(362). ԱՎԵՏԻՍ

Խորը մեզ, խորը մեզ,  
Այսօր տոն է ծննդյան,  
Ավետի՛ս,  
Այսօր սուրբ կույս Մարյամ ծնավ,  
Ավետի՛ս,  
Մելքում, Քասպար և Բաղդասար,  
Ավետի՛ս,

<sup>1</sup> Բանասացը նկատի ունի թղթի վրա նկարված թուրը: Մի ժամանակ մեր գյուղերում շատ տարածված երևույթ էր՝ տանն ունենալ թղթի վրա նկարված թուր, որը պարզապես մարդկանց գեղացիտական հակումների դրսևորումն էր (ծանոթ. բանահավաքի):

<sup>2</sup> Գրիշիկը բանասացի ավագ եղբայրն է (ծանոթ. բանահավաքի):

<sup>3</sup> Ռազմիկը բանասացի քրոջ ամուսինն է (ծանոթ. բանահավաքի):

<sup>4</sup> Բանասացը տրամուլ երգն ավարտում է, ասելով. «Կարճ կտրեցի, էլի», որից հետևում է, որ նա երգի մի մասն է կատարել (ծանոթ. բանահավաքի):

Հիսուս տեսան և զարմացան,  
Ավետի՛ս:

20(363)

Թաքավորի հեր, տուս արի,  
Թաքավորի մեր, տուս արի,  
Օրդա՛կ ու դա՛զ եմ պիրել,  
ճիտը կյա՛զ ու կես եմ պիրել:  
Կլխիտ տվող եմ պիրել,  
Շիրեփտ խլող եմ պիրել:

21(364). ԳՆԱՑԵՔ ՏԵՍԵՔ

Գնացե՛ք տեսե՛ք ի՞նչն է կերել այգին,  
Գնացի՛նք տեսանք այժն է կերել այգին:  
Այժն ու այգին, ծեզ բարիզենթան,  
Մեզ բարի գատիկ:

Գնացե՛ք տեսե՛ք ի՞նչն է կերել այծին,  
Գնացի՛նք տեսանք գայլն է կերել այծին,  
Գայլն ու այծը, այծն ու այգին,  
Չեզ բարիզենթան, մեզ բարի գատիկ:

Գնացե՛ք տեսե՛ք ի՞նչն է կերել գայլին,  
Գնացի՛նք տեսանք թուրն է կերել գայլին,  
Թուրն ու գայլը, գայլն ու այծը,  
Այժն ու այգին,  
Չեզ բարիզենթան, մեզ բարի գատիկ:

Գնացե՛ք տեսե՛ք ի՞նչն է կերել թուրին,  
Գնացի՛նք տեսանք ժանգն է կերել թուրին,  
Ժանգն ու թուրը, թուրն ու գայլը,  
Գայլն ու այծը, այծն ու այգին,  
Չեզ բարիզենթան, մեզ բարի գատիկ:

Գնացե՛ք տեսե՛ք ի՞նչն է կերել ժանգին,  
Գնացի՛նք տեսանք յուղն է կերել ժանգին,  
Յուղն ու ժանգը, ժանգն ու թուրը,  
Թուրն ու գայլը, գայլն ու այծը,  
Այժն ու այգին,  
Չեզ բարիզենթան, մեզ բարի գատիկ:

Գնացե՛ք տեսե՛ք ի՞նչն է կերել յուղին,

Գնացի՛նք տեսանք մուկն է կերել յուղին,  
Մուկն ու յուղը, յուղն ու ժանգը,  
Ժանգն ու թուրը, թուրն ու գայլը,  
Գայլն ու այծը, այծն ու այգին,  
Չեզ բարիզենթան, մեզ բարի գատիկ:

Գնացե՛ք տեսե՛ք ի՞նչն է կերել մուկին,  
Գնացի՛նք տեսանք կատուն է կերել մուկին,  
Կատուն ու մուկը, մուկն ու յուղը,  
Յուղն ու ժանգը, ժանգն ու սուրը,  
Սուրն ու գայլը, գայլն ու այծը,  
Այժն ու այգին,  
Չեզ բարիզենթան, մեզ բարի գատիկ:

ՕՐՈՐՈՑԱՅԻՆՆԵՐ ԵՎ ՄԱՆԿԱԿԱՆ  
ԽԱՂԵՐԳԵՐ

22(365). ԵՐԵՄԱՅԻՆ ԼՔԱԾ ՄՈՐ ԵՐԳԸ

ա) տարբերակ

Լայ լա՛, բալա՛, լայ լա՛,  
Մեծատերև թաթաշոր,  
Մանրատերև ոտաշոր,  
Քամին կանի՝ ժաժ կտա,  
Բախրեն կկյա՝ ծիծ կտա,  
Հիգյար չուկնի, քիչ կտա,  
Լայ լա՛, բալա լայա՛:

Տա մի հարսն ա ըլել, հերանց տուն քյոն-  
լիս ա ըլել, ճամփին ազատվել ա: Հըմանչել  
ա՛ պարուրը վեր ունի հերանց տուն քյոն:  
Ըսի թոկ ա քցել, ճոճ սարքել ու տրել միչին:  
Բախրեն եկել ա ծիծ ա տվել, մեծացել ա:  
Հերն էլ որսկան ա ըլել: Տեհել ա բախրի  
եղնեն մի խանաթ ա ման կյալի, ուզեցել ա  
բախրին սպանի, բախրեն մարդկային լեզու  
ա առել, ասել ա.

- Ինձ մի սպանի, ես քու ըրելսին ծիծ եմ  
տվել:

Վերջը ըրելսին բախրեն պահել ա, մեծըց-  
րել ու տվել հորը:

Սա նրա երջն ա:

23(366). ՕՐՈՐՈՑԱՅԻՆ

բ) տարբերակ

Լա՛յ, լա՛, բալա, քնի,  
Լա՛յ, լա՛, բալա, քնի,  
Քամին ժաժ կտա,  
Պախրենն ծիծ կտա,  
Լա՛յ, լա՛, բալա, քնի,  
Լա՛յ, լա՛, բալա, քնի:

24(367). ՕՐՈՐՈՑԱՅԻՆ

գ) տարբերակ

Նենա, նենա, բալա ջան,  
Լելո քամին ժաժ կտա,  
Կըխտար նանը ծիծ կըտա,  
Լենատիրն բաթաշոր,  
Նեղատիրն ոտաշոր,  
Նենի, նենի, բալա ջան,  
Կըխտար նանը ծիծ կտա,  
Լելո քամին ժաժ կըտա,  
Կըխտար նանը ծիծ կըտա,  
Նեղատիրն ոտաշոր,  
Լենատիրն բաթաշոր,  
Նենա՛, հրեսիք քու մամեն կկյա՛:

25(368). ՕՐՈՐՈՑԱՅԻՆ

Իմ բալիկի քունն ա տանում,  
Անուշ քնով կասեմ օրոր,  
Օրոր , օրոր , օրոր , օրոր , օրորեմ:

Ինձ քուն չունեմ, անուշ մայրիկ,  
Յերիք աչքերս փակի, հերիք,  
Օրոր, օրոր, օրոր, օրոր<sup>1</sup>

26(369). ՕՐՈՐՈՑԱՅԻՆ

Քնիր, իմ բալիկ, օրորի շարան,

Դու լաց մի լինի, ես շատ եմ լացել,  
Քնիր, բոյ քաշիր, բոյիտ ես մեռնեմ,  
Դու լաց մի լինի, ես շատ եմ լացել:

Յուլունք եմ շարել, կապել օրորոցիտ,  
Քնիր, բոյ քաշիր, բոյիտ ես դուրբան,  
Դու լաց մի լինի, ես շատ եմ լացել:

Քարավանն անցավ բարցած արցունքով,  
Սև անապատում ծունկ չոքեց մնաց,  
Այն մեր աշխարհի դարդ ու զուլումն էր,  
Դու լաց մի լինի, ես շատ եմ լացել:

Յոսանք է հոսում սև անապատում,  
Քնիր, բոյ քաշիր, բոյիտ ես դուրբան,  
Դու լաց մի լինի, ես շատ եմ լացել:

27(370)

Նենա՛ բալա լա՛յ, լա՛յ, լա՛յ, լա՛յ, լա՛յ,  
Դե գյուլում լա՛յ, ա՛յ բալա, լա՛յ, լա՛յ,  
Դե բա՛յ, բա՛յ արա, հա՛ լա՛յ, լա՛յ, լա՛յ,  
Իմ բալեն բայ բա՛յ կանի, բա՛յ, բա՛յ, բա՛յ,  
Իմ բալեն լայլայ կանի, լա՛յ, լա՛յ, լա՛յ,  
Նենա բալա, բայ բայ արա, բալա, բա՛յ,  
բա՛յ, բա՛յ,  
Դե նանի, բալիկ ջան, դե լա՛յ, ա՛յ,  
Դե նենա, բալիկ ջան, բա՛յ, բայ արա:

Իմ գյուլում բալա՛, նենա, բալա՛, նենա՛,  
Իմ գյուլում բալա՛, իմ գյուլում բալա՛,  
նենա՛, նենա՛,  
Դե նանի, բալիկ ջան, դե լա՛յ, ա՛յ,  
Դե նենա, բալիկ ջան, բա՛յ, բա՛յ, բա՛յ:  
Նենա իմ բալեն, բա՛յ բա՛յ անի,  
Իմ բալեն բա՛յ, բա՛յ անի,  
Իմ բալեն լա՛յ, լա՛յ անի՛,  
Դե լա՛յ, լա՛յ, լա՛յ, լա՛յ, լա՛յ, լա՛յ:

Իմ բալեն սարըմն ա՛, սարըմն ա՛,  
Իմ բալեն կամար յալըմն ա՛, յալըմն ա՛,  
Իմ բալեն սարերըմ հով արել ա, հով արել  
ա՛,  
Իմ անուշ բալեն սարերըմ բոյ արել ա,  
հո՛, բոյ արել ա՛:

<sup>1</sup> Ասում են երեխային քնեցնելիս (ծանոթ. բանասացի):

Էն սարի հովին մատա՛ղ, հովին մատա՛ղ,  
Իմ պուճուր բալի բոյին մատա՛ղ, բոյին  
մատա՛ղ,

Դե լա՛, լա՛, լա՛, լա՛, լա՛, լա՛, լա՛, լա՛,  
Դե բալա լա՛, լա՛, լա՛, լա՛, լա՛, ջանիդ  
մատա՛ղ,

Դե լա՛, լա՛, գյուլում բալա,  
Դե լա՛, լա՛ զիւլում բալա, բա՛:

Իմ բալեն բալա, բա՛, բա՛, բա՛,  
Իմ նան բալեն բա՛, բա՛, բա՛,  
Իմ լավ բալեն նենա բալա՛,  
Նենա, բայ բայ արա, բա՛, բա՛, բա՛, բա՛:

Յե՛յ նենա բալա՛, նենա բալա,  
Նենի պուճուր բալեն բա՛, բա՛, բա՛, բա՛,  
Ջանիտ մատա՛ղ, բա՛ բայ արա, բալիկ  
ջան,  
Բայ բայ արա, բալիկ ջան, դե լա՛, լա՛,  
լա՛):

Նենա, բալիկ ջան, դե լա՛, լա՛,  
Լա՛) իմ բալեն, լա՛, լա՛, բալիկ ջան,  
Բա՛յ բայ արա, բա՛, բա՛, բա՛, բա՛, բա՛,  
Յե՛յ նենա, բալիկ ջան, բա՛յ բայ արա:

Դե նենա, բալիկ ջան, բա՛յ բայ արա,  
Իմ բալեն բա՛յ բայ անի, բա՛, բա՛, բա՛,  
բա՛յ արա,  
Ջանիտ մատաղ լա՛, լա՛յ արա,  
Բայ բայ արա, իմ բալեն բա՛, բա՛յ արա՛,  
բա՛):

#### 28(371). ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳ

... իմ վառիկ,  
Սիրուն ճուտեր, համ վառիկ,  
Ոսկի փետուր աքլարիկ,  
Եկեք կերեք ծեր հատիկ:  
Նանը մածունը մերել ա,  
Յարսը սերը քաշել ա,  
Չալ կատուն փեսի փայլ կերել ա:

#### 29(372). ԵՐԵՒԱՅԻՆ ԽԱՂԱՑՆԵԼՈՒ ԵՐԳ

Նան աղջիկս,  
Տան աղջիկս,  
Ինքն էլ փաթմա-խանըմ,  
Ըխարի կուլա, փաթմա-խանըմ:  
Երկու պապ,  
Սի աղջիկ:  
Երկու բաբո,  
Սի աղջիկ:  
Չորս ախպեր,  
Սի աղջիկ:  
Նան աղջիկս,  
Կյան, աղջիկս,  
Պատրոնանքը կյան, աղջիկս,  
Ճամփին ուրուր տան, աղջիկս,  
Մարդ սպանեն,  
Կյան քեզ տանեն:

#### 30(373). ԵՐԵՒԱՅԻՆ ԽԱՂԱՑՆԵԼՈՒ ԵՐԳ

Ծափիկ, ծափիկ, ծիլ, ծիլ է,  
Ելեք տեսեք ո՛վ կգա,  
Անուշ բալես տուն կգա:  
Յա թըռը, թըռը, թըցնեմ,  
Յորդ թևին հսցնեմ:  
Մեծ թոնդիրը վառեցինք,  
Մեծ աքլորը մորթեցինք,  
Յա թռի, թռի, թըցնեմ,  
Յորդ թևին հսցնեմ:

#### 31(374)

Թռի, թռի թըցնեմ,  
Աքլորի միս կերցնեմ,  
Սարի հովին քընըցնեմ,  
Յորդ թևին հսցնեմ:



**ԱՇՈՒՂԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ  
ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԵՐԳԵՐ**

**32(375)**

1912 թվի մայիս ամսի 11-ին,  
Մի բարձր սարունմ ինք,  
Մի քրքրարուտ էլ քարունմ ինք,  
Զուրթով էլ ինչ-որ վարունմ ինք:  
Ծռչվա են ժամին,  
Խիստ փչեց քամին,  
Կըզկեց Գիգուլ ամին,  
Տվուց կոտրեց Ղըրագյուզ եզան էլ սամին:  
Այն հրոպեին հրիշտակն էլ ձայն տվուց  
Արտեմին,  
Ասավ. - է՛, Արտեմ, տեղըտ թոթաթ կաց,  
Որ ես կըլի քու վայըդ,  
Հրիշտակը չար նրա տափն տա տվուց,  
Խեխճ ըրեխեն մինչև ծառի տակը մին վազ  
տվուց,  
Երգեքիցը թափեց հուր, կրակն ու բարու-  
թը,  
Ուլախնին առան Սըթմիշին արուտը:  
Զահեկ են, ջանա ա շուշա՛մ,  
Հայրիս, մայրիս համար  
Հոտով փունջ մանըշակ են:  
Տեր աստված, ի՞նչ մեղավորութիւն ունեն,  
Որ գնըմ են անճաշակ:  
Գիգուլ ամին ասավ.  
- Ըրեխին միար տանեն մի կտոր հաց,  
Գնաց տեսավ ճիպտը թաթին ա մնացած<sup>1</sup>:

**33(376)**

Ես մի անբախտ տղա եմ՝  
Հայրենիքից անջատված,  
Թափառում եմ երկրները՝  
Սիրելիներից բաժանված:

Կարողությունից զրկված,

<sup>1</sup> Սա իրական դեպք է, որի մասին բանասացը ասաց. «Կենական տվել ա ես չուր վարիլիս տեղը սպանել, մի լավ, ջահել տղա էր» (ծանոթ. բանահավաքի):

Դառը, դաժան հոգսերուն:  
Ախն ու վախը դեռ մնացած  
Շատ-շատերանց սրտերուն:

Բարև արա, Գրիքոր ջան,  
Բոլոր ծանոթ տղերանց,  
Բարև արա նմանապես  
Իմ գյուղացի եղպորանց:

Բարև արա Բաղա գյուղի  
Յուր տխրած հանդերին,  
Բարև արա և մեր տանը  
Զորս մնացած պատերին:

Որի մեջն են են ծնվել,  
Շատ տարիներ էլ ապրել,  
Սակայն այսօր չար բախտը  
Մեկս մյուսից է զրկել<sup>2</sup>:

**34(377). ՍԱԼՈՒ ԵՐԳԸ**

Կարդացիք իմ բախտիս նամակը,  
Սև է երևում ինձ, օտարի նման,  
Ըսկսեց թառամել կյանքիս տերը,  
Զմռան ժամանակ էր, հունվարի նման:

Իմ անիրավ բախտից հաշիվ չունեցա,  
Երկինք սլացող արծիվ չունեցա,  
Պանդուխտ աշխարհիս մեջ մեկ պատիվ  
չունեցա,  
Համարում եմ ինձի հիմարի նման:

Իմ անիրավ բախտս ինձի հույս տալով,  
Մնացի լալո՞ւմ, լալով, ողբալով:  
Ցավերից տապալված, աշխար ման գա-  
լով,  
Անհովիվ, մոլորված ոչխարի նման:

Ես Սիմոն<sup>3</sup> եմ, աչքիս ծովը պակաս չէ,

<sup>2</sup> 1905 թ., հայկական կոտորածների ժամանակ զանձակի Բաղա գյուղի բնակիչները փախել են և ապաստանել տարբեր վայրերում: Այս երգը խաչատուր Արաբաշյանի կարոտի ճիշն է (ծանոթ. բանահավաքի):

<sup>3</sup> Սիմոնի փոխարեն պետք է լինի Սալի: Բանասացը երգը փոխանցել է այնպես, ինչպես լսել է իր հորից՝ մշեցի Սիմոնից (ծանոթ. բանահավաքի):

Գիշեր-ցերեկ՝ գլխիս հողը պակաս չէր,  
Անբախտ Արարատն եմ՝ մենձ սարի նման:  
Իմ անիրավ բախտես հաշիվ չունեցա,  
Երկինք սլացող արծիվ չունեցա,  
Պանդուխտ, աշխարքիս մեջ պատիվ  
չունեցա,  
Համարում եմ ինձի հիմարի նման:

### 35(378). ՍԻՐՈՒՆ ՅԱՐՔ

Որ այս աշխարհս երեսին ման գաս<sup>1</sup>,  
Անդարդ մարք չես ճարի,  
Երգել է տալիս խելագար,  
Ես քեզ ի՞նչ արի:  
Ե՛կ, ե՛կ, ե՛կ, սիրուն յար ջան,  
Եկ, մեկ էլ տեսնեմ քեզ:

Գուցե գնաս, էլ հետ չգաս,  
Էլ չի տեսնեմ քե՛զ,  
Եկ, սիրուն յար ջան, ե՛կ,  
Ե՛կ, ե՛կ, ե՛կ, սիրուն յար ջան,  
Եկ, մեկ էլ տեսնեմ քեզ:

Վարքի թուփը շատ սարք կըլնի,  
Վարքի թուփը շատ սարք կըլնի,  
Սիրած յարը քաղցր կըլնի,  
Եկ, սիրուն յար ջան, ե՛կ:  
Ե՛կ, ե՛կ, ե՛կ, սիրուն յար ջան,  
Եկ, մեկ էլ տեսնեմ քեզ:

Գուցե գնաս սառ գերեզման իջնես,  
Էլ հետ չգաս,  
Էլ չի տեսնեմ քե՛զ,  
Եկ, սիրուն յար ջան, ե՛կ:  
Ե՛կ, ե՛կ, ե՛կ, սիրուն յար ջան,  
Եկ, մեկ էլ տեսնեմ քեզ:

Չինարի ծառին բար չի լինի,  
Չինարի ծառին բար չի լինի,  
Անսեր յարին հաճ չի լինի,  
Եկ, սիրուն յար ջան, ե՛կ:  
Գուցե գնաս էլ հետ չգաս,

Էլ չի տեսնեմ քե՛զ,  
Եկ, սիրուն յար ջան, ե՛կ:  
Ե՛կ, ե՛կ, ե՛կ, սիրուն յար ջան,  
Եկ, մեկ էլ տեսնեմ քեզ:

### 36(379). ԱՏԿԵՏԻ ԲԱՂԸ

Ատվետի բաղը<sup>2</sup> հարթ ա,  
Պահակի պնդը բարթ ա,  
Սեղրակը Ալբեկից սնորթ ա:  
Կարթա Հայաստանի թերթը,  
Ատվետի բաղը կոլխողի համար մայիսի  
վարթ ա:

Կետի ղոլի հերկը,  
Ատվետի բաղից պիտի տան  
Կոլխողիկի խաղողի բերքը,  
Պահակի պնդը բարթ ա,  
Սեղրակը Ալբեկից սնորթ ա:

Բաղի վիրև մեծ թթնի,  
Արևն մտավ՝ կծթնի,  
Գողը եկավ, ման եմ կյռլի,  
Ճամփեմ չեմ գթնի:  
Պահակի պնդը բարթ ա,  
Սեղրակը Ալբեկից սնորթ ա:

Բաղի ներքև՝ ճռղաց,  
Գողը եկավ կըլխներս օյին խաղաց,  
Գնացի տեսա՝ վազներն էր քաղած,  
Պահակի պնդը բարթ ա,  
Սեղրակը Ալբեկից<sup>3</sup> սնորթ ա:

### 37(380)

Մի հեկտար ես բաղը,  
Տարան կերան ես թաղը,  
Ի՞նչ անի խեղճ պահակը,  
Ուսին էր մեծ մահակը,  
Չկա տուր ու թակը:

<sup>1</sup> Այս երգը հորինել է բանասաց Թագուհի Համ-գյանը, որը երգում էր մեծ զգացմունքով, երգն ունի հաճելի մեղեդի (ծանոթ. բանահավաքի):

<sup>2</sup> Ատվետի բաղ – Ալգեհովիտի կոլտնտեսության այգու անունն է (ծանոթ. բանահավաքի):

<sup>3</sup> Սեղրակը և Ալբեկը կոլտնտեսության այգու պահակներն են (ծանոթ. բանահավաքի):

Բրիգադիր՝ ուշքդ դեսը,  
Ուշ հասավ և Եվգենը<sup>1</sup>,  
Գնաց կորավ բերքի կեսը:  
Ի՞նչ անի խեղճ պահակը,  
Ուսին էր մեծ մահակը,  
Չկա տուր ու թակը:

Էս էլ հին խոտ ա,  
Գողը եկավ, ոտները ցխոտ ա,  
Գնացի տեսա՝ տարած հաղողը  
ալիգոտ<sup>2</sup> ա,  
Ի՞նչ անի խեղճ պահակը,  
Ուսին էր մեծ մահակը,  
Չկա տուր ու թակը:

### 38(381)

Բաղըն՝ տընգեցի դեղծի,  
Ո՞վ կարա էս պոնը ստեղծի.  
Բըրիգադիրս քըթա՞վ բերքահավաքի իզը,  
Էս ի՞նչ ցավ էր, որ քցեցին նրա վիզը:

Անունը՝ Ջաքի,  
Ինքը մի կոլխոզի մաքի,  
Չկարաց կոլխոզի բերքը հավաքի:

Հունը քաղեց էն բոզը,  
Տակինը կերավ Ջաքոյի խոզը,  
Կարտոփը կերավ՝ ալանի,  
Ատվետի բաղը տվավ թալանի:

Մուշեղին դարձեց պոնի,  
- Այ տղա, շաշ չես, էտ պոնը խփանի:  
Ինքը իրան տվավ քոլին,  
Յասաման<sup>3</sup> մնաց Մոզին:

Մտիկ արեք ծեռի կոտրած գավազանին,  
Տառի անունն էր Ջանի,

Ինքը կարավ չի կոլխոզըն՝ պոնի:

### 39(382). ԽՈՍԸ «ЗАКФЕДЕРАЦИЯ» ՇԵՆՆՈՏԻ ՄԱՍԻՆ<sup>4</sup>

Չակավկազկի ֆեդերացի,  
Վրեն կա իրեք կեղացի,  
Մի հայ, մի թուրք, մի վրացի:  
Վրացին հային թե. «Հետս հընգերացի»:  
Թուրքը ասեց. «Բա ե՞ս»:  
Հայը ասեց. «Տու է՛ ես<sup>5</sup>...»

### 40(383)

Այ իմ էշը, բոզ էշը,  
Որ միշտ ման էր ածո՞մ իմ վեշը,  
Պատահեց Ակոփի պես հրեշը:

Յալիցը թուլ արավ կերանը,  
Վրիցը պուկ էկավ դափանը,  
Տվավ պոն արավ էշիս թափանը:

Այ իմ էշը, բոզ էշը,  
Որ միշտ ման էր ածո՞մ իմ վեշը:  
Գնացի տեսա իմ իշի պոզը,  
Տեղը տվավ իր սիպտակ խոզը:

### 41(384)

Ազեդա Սեդրա՛կ, ար ածա,  
Մեր Սաթիկին պար ածա,  
Ջիզի շորերը կարած ա,  
Սադափները շարած ա,

<sup>4</sup> 30-ական թվականներին Ուզունքալայում մի խումբ երիտասարդներ Առուստամանց Ալբեկին խնդրում են մի բանաստեղծություն հորինել «За-кфедеpация» ծխախոտի տուփի վերաբերյալ և որպես մրցանակ ստանա մի տուփ ծխախոտ: Նա վերցնում է ծխախոտի տուփը և հանպատաստից հորինում: (այս հիշողությունը (մեմորատ) մեզ պատել է ուսուցիչ Հայկ Արտաշեսի խենջանը Ռևազլու (այժմ Դիտավան) գյուղում (ծանոթ. բա-նահավաքի):

<sup>5</sup> Բանասաց-հորինող Ալբեկ Առուստամյանը ծեռ-քով ցույց է տվել մարմնի համապատասխան մա-սը (ծանոթ. բանահավաքի):

<sup>1</sup> Եվգենը կոլտնտեսության գյուղատնտես Եվգեն-յանն է (ծանոթ. բանահավաքի):

<sup>2</sup> Ալիգոտ – խաղողի տեսակ է (ծանոթ. բանա-սացի):

<sup>3</sup> Յասաման – հանդամաս է, որը գտնվում է Այգե-հովիտի և Դիտավան գյուղերի միջև (ծանոթ. բա-նահավաքի):

Քոքորի յալով տարած ա,  
Վարդանի յալով պիրած ա:

Էսպես արավ քու լռչնող:

45(388)

42(385). ԿԱՏԱԿԵՐԳ

Կետի ծորըմ ճաղաց ունեմ,  
Փափուկ ապրուստ, լավ հաց ունեմ,  
Ուստա պռնեմ, քաղցր նայեմ,  
Ուտեմ-խմեմ, քաղցր նայեմ,  
Ես կհագնեմ դարթմա չուխա,  
Քեզ կպահեմ հով տեղերում,  
Աշխատածս էլ չափլի կտամ,  
Ախճիկըտ էլ մարթի կտամ:  
Եկ ինձ սիրի, ես քեզ առնեմ,  
Սերս սերիտ հետ կխառնեմ:

Դվերը քյնամ, դվերը չքյնամ,  
Խոզմարաքա<sup>1</sup> ճըմփովը քյնամ,  
Ջիլբանդս համեմ կոնովս քցեմ,  
Կյուտիկս համեմ ճտովս քցեմ:  
Ի՞նչ անեմ, որ հեռու եմ,  
Անտեր, անտիրական եմ,  
Սոված փորով մուրացկան եմ:  
Ամեն տեղից հեռու եմ,  
Ամեն պառնից պակաս եմ:  
Դվերը քյնամ, դվերը չքյնամ,  
Խոզմարաքա ճմփովը քյնամ:

43(386)

Մի պատուհաս եր մեր գյուղի Կաթոն,  
Մի օր հանդ տարավ մեր փոքրիկ բիծոն,  
Եկավ կանգնեց գլխիս՝ ինչպես ստրամնիկ,  
Բա չե՞ս իմանալ Կաթո-Անդրանիկ:  
Ասավ ու առավ ճիպտոր՝ հոնի  
Ու գլխիս զարկեց ինչքան ուժ ունի:

Աչքս բաց արի տեսա մեր դային,  
Երփ պտի նստենք մենք նրա վային:  
Փչում է, բուք ու բորան է անում,  
Ծառեր ու ծաղիկ տըկոռիան անում:

Դու բաքավորն ես իժ ու խլեզի,  
Էտ շեկ բեղերդտ քեզ լավ կսազի:

46(389). ԽՈՊԱՆԻՍԻ ԵՐԳԸ<sup>2</sup>

Յենց որ եկավ մարտի ուրը<sup>3</sup>,  
Մուրճ ու մալեն առավ ուրը,  
Խավարեց կնոջ աչքի լույսը,  
Ամուսնուրը կըտրեց հույսը:  
Խոպանիստ գնալը բարի, } 2  
Տուց-տեղ թողած արև-աշխարհին՝  
Էս տարի շուտ հետ արի,  
Որ կինըտ ուրիշ մարթ չճարի:

Նաչալնիկը կայարանի  
Մի կոնյակով տոմս կճարի:  
Ուղարկեց խորքը Ռուսաստանի,  
Ասաց.- Գնա՛, հանգիստ բանի:  
Խոպանիստ գնալը բարի, } 2

44(387)

Չալտիկանց Սաքի՛, քածո կապի,  
Չալտիկանց Սաքի, քածո կապի,  
Էսպես արավ էտ լռչնողը,  
Տվեց փշրեց ոտիս լուլեն:  
Վրձ արավ պռատ կուլեն,  
Վրձ արավ պռատ կուլեն,  
Տվեց փշրեց ոտիս լուլեն:  
Քեզ ասըմ եմ՝ քածո կապի,

<sup>1</sup> Խոզմարաք - հանդամաս է Իջևանի մոտ (ծանոթ. բանահավաքի):

<sup>2</sup> 60-ական թվականներին Խորհրդային երկրում սկսվեց խամ ու խոպան հողերի յուրացման շարժումը: Բազմաթիվ երիտասարդներ կամավոր գնում էին խամ ու խոպան հողերը յուրացնելու: Յետագայում Չայաստանից Ռուսաստան և այլուր արտագնա աշխատանքի մեկնողներին սկսեցին անվանել խոպանչիներ, թեև նրանք արդեն ոչ թե խամ հողերն էին յուրացնում, այլ ուրիշ գործերով էին զբաղվում: Արտագնա աշխատանքի հետևանքով քայքայվում էին ընտանիքները (ծանոթ. բանահավաքի):

<sup>3</sup> Մարտի ուրը - մարտի վերջը (ծանոթ. բանահավաքի):

ՏՈՒՆ-տեղ թողած արև-աշխարհին՝  
 Էս տարի շուտ հետ արի,  
 Որ կինըս ուրիշ մարթ չճարի:  
 Ջանը տեղն կարմիր հայ է,  
 Յույսով գնաց՝ մեքենայի<sup>1</sup>,  
 Բախտը բերեց ռուսի նաև,  
 Տված փողերը ռախտոդ արին:  
 Խոպանիստ գնալո բարի, } 2  
 ՏՈՒՆ-տեղ թողած արև-աշխարհին՝  
 Էս տարի շուտ հետ արի,  
 Որ կինըս ուրիշ մարթ չճարի:

Խաբարն էկավ՝ Ռուսաստանում,  
 Խոպանիստն լավ է բանում,  
 Ուժ ու եռանդ չի խնայում,  
 Երկու-երեք կին է պահում:  
 Խոպանիստ գնալո բարի, } 2  
 ՏՈՒՆ-տեղ թողած արև աշխարհին՝  
 Էս տարի շուտ հետ արի,  
 Որ կինըս ուրիշ մարթ չճարի:

Գուսան Լորիկ, երբ հարմար է,  
 Տանը նստի երգ հնարի:  
 Գովքը երգի Մասիս սարի,  
 Անբախտ կանանց մխիթարի:  
 Խոպանիստ գնալո բարի, } 2  
 ՏՈՒՆ-տեղ թողած արև-աշխարհին՝  
 Էս տարի շուտ հետ արի,  
 Որ կինըս ուրիշ մարթ չճարի:

Գուսանն եմ ես՝ Անտոնյանը,  
 Խեղճը թողեց Ռուսաստանը,  
 Վերցրեց դատարկ չամադանը,  
 Եկավ նստեց, դիլիտր, տանը:  
 Խոպանիստ գնալո բարի, } 2  
 ՏՈՒՆ-տեղ թողած արև-աշխարհին՝  
 Էս տարի շուտ հետ արի,  
 Որ կինըս ուրիշ մարթ չճարի:

## 47(390). ՅՈՒՂ-ՊԱՆԻՐԸ

Մեր կոլխոզի յուղ-պանիրը  
 Սարից բերի ես,  
 Էն էլ ճամփին բռնվեցի  
 Յակառակի պես:  
 Ասի.- Սուրեն<sup>2</sup>, հոքրի տղա,  
 Բա ամոթ չի՞ մեզ,  
 Էրկու կիլո պանիրն ի՞նչ ա,  
 Որ բռնում ես մեզ:

Ասավ.- Ժորիկ<sup>3</sup>, դայնի տղա,  
 Տար պահեստին տուր,  
 Թե չէ գյուղում կխայտառակվես,  
 Կուտես թուք ու մուր:

Ես էլ, հիմար, տուն բերեցի,  
 Որ պահեմ թաքուն,  
 Յետևիցս Իսրայիլ<sup>4</sup>  
 Յանկարծ մտավ տուն:

Այստեղ արդեն թուքս կպավ,  
 Ասի.- Կորանք, տես,  
 Տնով տեղով կորչելու ենք  
 Մեր Ափաշ<sup>5</sup> ու ես:

Բայց մեր գյուղում կային մարդիկ,  
 Լավ պահեցին մեզ,  
 Բան չարեցին մեր Ափաշին,  
 Եժան պոծա ես:

Վայ, ձեզ մատաղ, մեր կոլխոզի  
 Գյուղ-ղեկավարներ,  
 Յաջորդ անգամ իմ բերածից  
 Չեր տուն կտանեմ:

<sup>2</sup> Երգի հերոսներն իրական դեմքեր են. Սուրենը կոլտնտեսության (Դիտավանի) նախագահ Սուրեն Բաննահյանն է, որը բանասացի ազգականն է (ծանոթ բանահավաքի):  
<sup>3</sup> Ժորիկ - բանասացն է:

<sup>4</sup> Դիտավանի բնակիչ Իսրայել Մարդանյանն է:

<sup>5</sup> Ափաշը Դիտավանի կոլտնտեսության Ֆերմայի վարիչ Փաշա (Արշակ) Յարալյանն է (ծանոթ. բանահավաքի):

<sup>1</sup> Խոպան գնացողների մեծ մասը փող էր աշխատում մարդաստար ավտոմեքենա գնելու համար, որը բավական թանկ հաճույք էր (ծանոթ. բանահավաքի):

## 48(391). ՄԵՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Երևանը զարգացել է,  
Աղջիկները զարգացել են,  
Կանչում, կանչում տուն չեն գալիս,  
Ցավտ տանեմ,  
Առանց յարի ման չեն գալիս:  
Բուկի ուտող երևանցիք,  
Իշխան ուտող սևանցիք,  
Ցավտ տանեմ,  
Ազնավ ծախող համաձվեցիք:

Թարմ խնձոր ուտող դիլիջանցիք,  
Չեռքին նայող կիրովականցիք,  
Ցավտ տանեմ,  
Լեզվից հարուստ լեմինականցիք:

Մասրով չայ խմող բողբեղեցիք,  
Ջրո մածուն ուտող գոշավանքեցիք,  
Ցավտ տանեմ,  
Ուտող-խմող իջևանցիք<sup>1</sup>:

Սիմիկ ուտող ջարիչեցիք,  
Լոբի պճողող աղոթանցիք,  
Ցավտ տանեմ,  
Ղոնախ փխցնող խաշթառակեցիք:

Կաղին ուտող թալեցիք<sup>2</sup>,  
Էշ թոլ անող ենոքավանցիք,  
Ցավտ տանեմ,  
Տղա փխցնող լուսածորցիք:

Ժավել խմող աչաջրեցիք,  
Մեռել կրակող ուղունթալցիք,  
Ցավտ տանեմ,  
Չաճար ուտող ծռվեցիք:

Թուրքի քամակ լալիկեղացիք,  
Ցավտ տանեմ,  
Ուտող-խմող իջևանցիք:

Տրճանի տակը ճուր անող Եփրեմը<sup>3</sup>,  
Կամանց քյնացող, պինդ կոխող Ավետիքը,  
Տաքտեղի պոժ Սուճաթը,  
Սաղրի-վաղրի Եղիշը,  
Թըխսի պըհիր<sup>4</sup> Ալբեկը,  
Պեցրը պաճով Արթինը,  
Սրթուզ Սարքիսը:

## ԱԳԵՐԳԵՐ

## 50(393)

Անկեղծ սիրեցի, սրտով սիրեցի<sup>5</sup>,  
Էլ չեմ ասիլ քե՛զ,  
Էլ չեմ ապրիլ առանց քեզ:  
Ասըմ ա՛, ասըմ ա՛, ասըմ ա՛, ա՛յ ասըմ ա՛,  
Առանց քեզ չեմ ապրիլ, գիդացել ա՛:  
Ոչ ոքի չգիդե՛մ,  
Քեզ տեսնալով սիրեցի՛,  
Առանց քեզ չեմ ապրի:  
Ծիշտ ասել ա՛, ա՛յ,  
(Ի՞նչ անեմ է, քիրա ջան)<sup>5</sup>  
Դաճողս շատ ա, ի՞նչ անե՛մ,  
Ըրեքնակս թռել ա, ի՞նչ անե՛մ,  
Տան մի դուր մոշռել ա, ի՞նչ անե՛մ,  
Ղոնաղնիս փոխվել է՛մ:  
Հլեյի ուրթս փոխական ըլեմ,  
Քիրա ջան, ի՞նչ անե՛մ,  
Դաճոս շա՛տ ա,  
Շվաքըս թռել ա, ի՞նչ անե՛մ,  
Շատ եմ յըրալո՛ւ,  
Վաթթամուշիմ կըրների վրա տըրո՛ծ,

<sup>3</sup> Այս չափածոյի հեղինակ Իծուկը (Այծեմնիկ Սահակյան, որը մի խոսքաշատ ու սրամիտ կին է եղել և որի ասածները մինչև հիմա գյուղում հիշում են և օգտագործում) բնութագրել է Ուսալուի գյուղական հասարակության ներկայացուցիչներին: Յուրաքանչյուրի բնավորությունն ու մարդկային կերպարն ամփոփված է սեղծ ու բնորոշ ձևակերպման մեջ: Այս բնութագրվող մարդկանց ես տեսել եմ իմ մանկության տարիներին (ծանոթ. բանահավաքի):

<sup>4</sup> Թըխսի պըհիր - կարճահասակ (ծանոթ. բանահավաքի):

<sup>5</sup> Բանասացը երգն ընդմիջելով՝ դիմում է ունկնդրին (ծանոթ. բանահավաքի):

<sup>1</sup> Տարբերակ՝ Ասեղ մաշկող իջևանցիք (ծանոթ. բանահավաքի):

<sup>2</sup> Տարբերակ՝ Մատաղ փխցնող թալեցիք (ծանոթ. բանահավաքի):

Տարալ մաշինընձ,  
 ճիտս ծուռն ա,  
 Իմ գյուղն մարալ ախճիկը՝,  
 Շատ եմ նեղության մեջ,  
 Քիրա ջան, հնար չկա՝:  
 Քե մատաղ, քիրա,  
 Որ տըժժոր տեղ ես քյնըմ:  
 Շատ տըժժոր դրություն ա:

#### 51(394)

Մարթըս քյնաց բանա՛կ<sup>1</sup>,  
 Մի ախճիկ ըրեխա ունի խըտտի՛ս,  
 Պատրոնս ասեց.- Խի՞ ես նստե՛լ,  
 Ասեցի.- Բա ո՞նց անեմ,  
 Էս եթիմին ո՞վ դի պահի՛լ:  
 Ասեց.- Ես կպահեմ, տու քյնա՛,  
 Եղեվ մարթըս էկավ,  
 Հոր յախիցը փըռնեց,  
 Հորը մալմախ ածե՛ց, պատերովը տվո՛ւց,  
 Ո՞ր խի՞ ես տեղը տըժըրցրել, քյնացել ա՛:  
 Եղմա թաթա տվուց, ասեց.

- Տու մարթի չքյնա տուրա՛շ տե՛ղ,  
 Քու տերն ե՛մ,  
 Հայրիկըս տվուց ոչ, ա՛ ես քե մատա՛ղ,  
 ճիտըս ծուռ մնա՛ց,  
 Անբախտացա, տըռներն ընգա՛, ա՛յ, ա՛յ,  
 Ասըմ ես՝ ասա, քիրա ջան,  
 Դադոս շատ ա՛, ա՛յ:  
 Էրկու տարեն հարս եմ ըլել,  
 Նշանածը մահացավ, մենակ եմ մնացել:  
 Ի՞նչ ասեմ, ա՛ ես քե մատա՛ղ,  
 Շատ եմ անբախտութիւն քաշե՛լ,  
 Երքն էլ ա մտիցս ընգել,  
 Ասիլ-խոտալն էլ ա մտիցըս ընգել,  
 Ա՛ քու դադոն առնեմ:  
 Էկավ թաթա տվուց,  
 Մարթի չքյնի էրկու տարի՛, ա՛յ,  
 Հերը մաղբուն էր, պահեր ոչ,  
 Պատերազմն էր:  
 Ի՞նչ ասեմ, քիրա ջան, մտիցըս ընգել ա՛,  
 Շատ պոռներ եմ գիղացել, մտիցս ընգել ա՛,  
 ա՛յ,  
 Մտիցըս ընգել ա՛:

<sup>1</sup> Բանասաց Սարմինազ Մեհրաբյանի կյանքի պատմությունը ողբածայն սգերգի տարբերակով: